ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2016 թվականի **ԹԻՎ 20** քաղ. Սանկտ Պետերբուրգ

Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագրի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 81-րդ եւ 104-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագիրը:

2. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ նախապատրաստել եւ ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը՝

մինչեւ 2017 թվականի ապրիլի 1-ը՝ անդամ պետություններում գոյություն ունեցող առեւտրային հարթակներն օգտագործելու, այդ թվում՝ դրանք արդիականացնելու (անհրաժեշտության դեպքում), կամ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի շրջանակներում

էլեկտրական էներգիայի կենտրոնացված առեւտրի կազմակերպման համար նոր առեւտրային հարթակներ ստեղծելու, ինչպես նաեւ արդիականացումը ֆինանսավորելու կամ այդպիսի առեւտրային հարթակներ ստեղծելու համար արտաբյուջետային աղբյուրներ ներգրավելու մեխանիզմի մասին առաջարկներ.

մինչեւ 2017 թվականի մայիսի 1-ը՝ Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման առնչությամբ միջոցառումների (բացառությամբ տեղեկատվության փոխանակման այն համակարգի ձեւավորման առնչությամբ միջոցառումների, որն ապահովում է Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը) ֆինանսավորման մասին առաջարկներ՝ նշելով ֆինանսավորման համապատասխան աղբյուրներով ֆինանսավորման նախնական ծավալները.

մինչեւ 2018 թվականի հունվարի 1-ը՝ Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգը եւ (կամ) տեղեկատվության փոխանակման այն համակարգի ձեւավորման համար այլ (այդ թվում՝ գոյություն ունեցող) մեխանիզմներ օգտագործելու հնարավորության մասին առաջարկներ, որն ապահովում է Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը, ինչպես նաեւ տեղեկատվության փոխանակման այդպիսի համակարգի ձեւավորման առնչությամբ միջոցառումների ֆինանսավորման մասին առաջարկներ։

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
բարձրագույն խորհրդի 2016 թվականի
դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ

ԾՐԱԳԻՐ

Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման

Ներածություն

Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան զուգահեռ աշխատող էլեկտրաէներգետիկական համակարգերի վրա հիմնված՝ Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) էլեկտրաէներգետիկական ներքին մեծածախ շուկաների սուբյեկտների միջեւ առկա հարաբերությունների համակարգ է՝ կապված էլեկտրական էներգիայի (հզորության) առք ու վաճառքի հետ, որը գործում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի եւ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների միջեւ համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորումն իրականացվում է «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 21-րդ հավելված) 5-րդ կետում նշված սկզբունքների հիման վրա:

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 81-րդ եւ 104-րդ հոդվածներին

համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 12 որոշմամբ հաստատվել է Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ)։

Սույն Ծրագիրը մշակվել է Հայեցակարգի հիման վրա՝ Պայմանագրի 81–րդ հոդվածի 2–րդ կետին համապատասխան։

Պայմանագրի 104-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման հետեւյալ ժամկետները՝

սույն Ծրագրի հաստատումը՝ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը.

սույն Ծրագրի միջոցառումների կատարումը՝ մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը։

Սույն Ծրագրի կատարման նպատակներն են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների սուբյեկտների մասնակցությանը անդամ պետությունների պատրաստվածությունն ապահովելը եւ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի արդյունավետ գործունեության համար պայմաններ ստեղծելը։

Սույն Ծրագիրը ներառում է փոխկապակցված կազմակերպական, տեխնոլոգիական եւ այլ միջոցառումների համալիր, որն ապահովում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորումը, գործողությունների հաջորդականությունը, դրանց իրագործման ժամկետները, կատարողներին, ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաեւ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող՝ Միության մարմինների ակտերի մշակումը։

Սույն Ծրագրի միջոցառումները կատարելու արդյունքում ձեւավորվելու են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմը, մեթոդական, կազմակերպական, ենթակառուցվածքային, տեխնոլոգիական եւ իրավական հիմքերը։

Սույն Ծրագրում օգտագործվող հասկացությունները կիրառվում են Պայմանագրում եւ Հայեցակարգում սահմանված նշանակություններով։

I. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման փուլերը։ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմի ձեւավորումը

1. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման փուլերը

Հայեցակարգի XIII բաժնով սահմանված են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման հետեւյալ փուլերը՝

փուլ I (2015 թվական – 2016 թվականի I եւ II եռամսյակներ)՝ սույն Ծրագիրը մշակելը եւ հաստատելը.

փուլ II (2016 թվականի III եւ IV եռամսյակներ — 2018 թվականի I եւ II եռամսյակներ)՝ սույն Ծրագրի միջոցառումները կատարելը։ Տվյալ փուլի հիմնական արդյունքը պետք է լինի բոլոր անհրաժեշտ իրավական, ինստիտուցիոնալ, տեխնոլոգիական եւ այլ պայմանների ստեղծումը, որոնք ապահովում են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի գործունեությունը։

Տվյալ փուլում անհրաժեշտ է այդ թվում նաեւ՝

ձեւավորել Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի տեխնոլոգիական հիմքը.

ուղղահայաց ինտեգրված կառուցվածքներում տարանջատել գործունեության մրցակցային եւ մենաշնորհային տեսակները.

մշակել Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտեր՝ համաձայն հավելվածի՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան ձեւավորելու միջոցառումների պլանին համապատասխան.

փուլ III (2018 թվականի III եւ IV եռամսյակներ – 2019 թվականի I եւ II եռամսյակներ)՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի

տեխնոլոգիական հիմքի գործունեությունն ապահովելը, Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը, որն այդ թվում ներառում է էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնները (այսուհետ՝ միջազգային պայմանագիր)։

2019 թվականի հուլիսի 1-ից հետո Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի զարգացումը եւ գործունեությունը կարգավորվում են միջազգային պայմանագրով, Միության մարմինների ակտերով եւ անդամ պետությունների օրենսդրությամբ։

2. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմի ձեւավորումը

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմը սահմանվում է փուլ առ փուլ՝

Միության գազի ընդհանուր շուկա ստեղծելուց առաջ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կազմը սահմանվում է Հայեցակարգի VI բաժնին, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թվականի մայիսի 8-ի թիվ 12 որոշման 2-րդ կետին եւ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

Միության գազի ընդհանուր շուկա ստեղծելուց հետո Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմը գործում է անդամ պետությունների օրենսդրությանը եւ միջազգային պայմանագրի դրույթներին համապատասխան։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի զարգացման եւ գործունեության փուլերին վերաբերող անցումային դրույթներն ընդգրկվելու են միջազգային պայմանագրում։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են անդամ պետությունների՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտի օրենսդրությամբ եւ սույն Ծրագրի VIII բաժնով նախատեսված՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերով՝ ներառյալ.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոնները, որոնք ներառում են, այդ թվում՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի հասանելիության կարգը (այսուհետ՝ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոններ), տեղեկատվության փոխանակման կանոնները։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմը ձեւավորելիս անդամ պետությունների կողմից ապահովվում է ուղղահայաց ինտեգրված կառուցվածքներում գործունեության մրցակցային եւ մենաշնորհային տեսակների տարանջատումը։

II. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի տեխնոլոգիական հիմքի ձեւավորումը

1. Էլեկտրական էներգիայի առեւտրի տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովումը

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի գործունեության համար պայմաններ ստեղծելու նպատակով՝

մշակվում են տեղեկատվության փոխանակման կանոններ, որոնք նախատեսում են տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակման կարգն այն ծավալով, որը բավարար է էլեկտրաէներգետիկական համակարգերի աշխատանքի ռեժիմների տարեկան, ամսական, օրական եւ ներօրյա պլանավորման համար, էներգահամակարգերի հաշվարկային մոդելների ձեւավորման եւ անդամ

պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ռեժիմների պլանավորման, կառավարման ընթացքում համակարգային օպերատորների փոխգործակցության համար, Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի գործունեության տեխնոլոգիական ապահովման անհրաժեշտ գործառույթների կատարման համար, ինչպես նաեւ անդամ պետությունների կողմից Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների կազմի մասին տեղեկատվության փոխադարձ փոխանակման եւ բացահայտման կարգը.

ձեւավորվում է տեղեկատվության փոխանակման համակարգ, որն ապահովում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի եւ էլեկտրաէներգետիկական շուկաների գործունեության մասին տվյալների հիման վրա.

ձեւավորվում է առեւտրի էլեկտրոնային համակարգ, որն ապահովում է ժամկետային պայմանագրերով կենտրոնացված սակարկությունների անցկացումը.

ձեւավորվում է առեւտրի էլեկտրոնային համակարգ, որն ապահովում է «մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկությունների անցկացումը.

մշակվում են տեխնիկական պահանջներ էլեկտրական էներգիայի առեւտրային հաշվառման համակարգերի, տվյալների փոխանակման տեղեկատվական համակարգերի եւ կապի այն ուղիների նկատմամբ, որոնք ապահովում են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը, ինչպես նաեւ ապահովվում է նշված պահանջների կատարումը։

Անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի հուսալի զուգահեռ աշխատանքի ապահովումը պետք է իրականացվի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ապահովման

մասին» 1998 թվականի նոյեմբերի 25-ի պայմանագրին համապատասխան՝ անդամ պետության կողմից ստանձնած պարտավորությունների շրջանակներում, եւ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի զուգահեռ աշխատանքի ապահովման մասին երկկողմ պայմանագրերին համապատասխան։

2. Միջպետական էլեկտրահաղորդման գծերի թողունակության բաշխման մեխանիզմի մշակումը

Միջպետական էլեկտրահաղորդման գծերի թողունակության բաշխման մեխանիզմի մշակումը (այսուհետ՝ թողունակություն) նախատեսված է Հայեցակարգի V բաժնի հինգերորդ պարբերությամբ։

Թողունակությունը կարող է օգտագործվել, այդ թվում՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի, էլեկտրական էներգիայի միջպետական հաղորդման ապահովման համար, ինչպես նաեւ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական համակարգերի կայուն աշխատանքի ապահովման համար։

Թողունակության բաշխման մեխանիզմի ստեղծման նպատակով մշակվում են թողունակությունը սահմանելու եւ բաշխելու կանոններ, որոնք նախատեսում են՝

թողունակության բաշխման եւ օգտագործման կարգը.

ենթակառուցվածքային կազմակերպությունների փոխգործակցության կարգը՝ թողունակության եւ կնքված պայմանագրերի ծավալների մասին տեղեկատվության փոխադարձ փոխանակման նպատակով.

տեխնիկական հնարավորությունների առկայությունը որոշելու կարգը, որը հաշվի է առնում էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման տեխնիկական հնարավորության որոշման հետեւյալ առաջնահերթությունը, որը սահմանվել է «Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի

սուբյեկտների ծառայությունների հասանելիության ապահովման, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրության 7-րդ կետով (Պայմանագրի 21–րդ հավելված)՝

էլեկտրական էներգիայի (հզորության)՝ այն անդամ պետության ներքին պահանջների ապահովում, որի էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով է պլանավորվում իրականացնել միջպետական հաղորդումը.

սահմանակից անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում՝ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի մի մասից դեպի դրա մյուս մասը.

էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով՝ մեկ անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգից դեպի մյուս անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգ.

էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ապահովում անդամ պետության էլեկտրաէներգետիկական համակարգի միջոցով՝ երրորդ պետությունների էլեկտրաէներգետիկայի ոլորտի սուբյեկտների նկատմամբ պարտավորությունների կատարման նպատակով.

3. Միջպետական էլեկտրական ցանցերի զարգացումը

Գոյություն ունեցող միջպետական էլեկտրահաղորդման գծերը թույլ են տալիս միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպել Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի գործունեությունը։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ենթակառուցվածքի զարգացումը՝ ելնելով դրա մասնակիցների շահերից, եւ միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման հարցերով անդամ պետությունների փոխգործակցությունն իրականացվում են Հայեցակարգի X բաժնին համապատասխան։

Միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման նպատակով մշակվում է միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մասին դրույթ, որը նախատեսում է՝

միջպետական էլեկտրահաղորդման գծերի կառուցման ժամկետների եւ պարամետրերի համաձայնեցման վերաբերյալ առաջարկների նախապատրաստման կարգը.

միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մեխանիզմը.

անդամ պետությունների այն կազմակերպությունների սահմանումը, որոնք լիազորված են միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մասով առաջարկների նախապատրաստման, էլեկտրահաղորդման միջպետական գծերի կառուցման ժամկետների եւ պարամետրերի համաձայնեցման համար։

III. Ազատ երկկողմ պայմանագրերով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի զարգացումը

Ազատ երկկողմ պայմանագրերով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի զարգացումը (այսուհետ՝ ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտուր) իրականացվում է Հայեցակարգի V բաժնի երկրորդ եւ վեցերորդ պարբերություններին համապատասխան։

Ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի զարգացման համար՝

ձեւավորվում է ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի մասնակիցների կազմը՝ սույն Ծրագրի I բաժնի 2-րդ ենթաբաժնին համապատասխան.

էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոններում, որոնք մշակվում են՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների առանձնահատկությունները, նախատեսվում են՝

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների՝ ազատ երկկողմ պայմանագրերով փոխադարձ առեւտրի իրականացման հասանելիության կարգը եւ ընթացակարգերը.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների միջեւ փոխգործակցության մեխանիզմներն ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի ժամանակ.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ պայմանագրեր կնքելու, գրանցելու եւ հաշվառելու կարգը ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի ժամանակ.

Ձեւավորվում է ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի տեխնոլոգիական հիմքը, այդ թվում՝ թողունակության որոշման եւ բաշխման կանոններում նախատեսվում է թողունակությունը հաշվառելու եւ այն ազատ երկկողմ պայմանագրերով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի մասնակիցների միջեւ բաշխելու մեխանիզմը։

Կնքված ազատ երկկողմ պայմանագրերի ծավալները պետք է գրանցվեն եւ հաշվի առնվեն անդամ պետությունների էլեկտրական էներգիայի ներքին շուկաներում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան։

IV. Կենտրոնացված սակարկությունների միջոցով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կազմակերպումը

1. Կենտրոնացված սակարկությունների միջոցով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի իրականացման եղանակները

Կենտրոնացված առեւտրի միջոցով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կազմակերպումն իրականացվում է Հայեցակարգի V բաժնի երրորդ եւ յոթերորդ պարբերություններին համապատասխան։

Կենտրոնացված սակարկությունների միջոցով էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտուրն իրականացվում է առեւտրի էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ՝ հետեւյալ եղանակներով՝

էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի (մատակարարման) ժամկետային պայմանագրերով առեւտուր՝ առեւտրի էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ (այսուհետ՝ ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտուր).

էլեկտրական էներգիայի ժամային ծավալների «մեկ օր առաջ» առեւտուր (այսուհետ՝ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտուր)՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված ալգորիթմի օգտագործմամբ։

2. Ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի կազմակերպումը

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի շահագրգիռ մասնակիցներին սակարկություններին կամավոր հիմունքով մասնակցելու հնարավորություն ընձեռելու նպատակով՝ ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի կազմակերպման համար՝

որոշվում է անդամ պետություններում գոյություն ունեցող հարթակներն օգտագործելու հնարավորությունը՝ ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի համար, կամ նոր հարթակներ ստեղծելու անհրաժեշտությունը.

ձեւավորվում է ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի մասնակիցների կազմը՝ սույն Ծրագրի I բաժնի 2-րդ ենթաբաժնին համապատասխան.

էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոններում, որոնք մշակվում են՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների առանձնահատկությունները, նախատեսվում են՝

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների՝ ժամկետային պայմանագրերով կենտրոնացված սակարկություններին հասանելիության կարգը եւ ընթացակարգերը.

սակարկությունների անցկացման եւ էլեկտրական էներգիայի առք ու վաճառքի (մատակարարման) գնի որոշման կարգը՝ հաշվի առնելով անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների առանձնահատկությունները, ինչպես նաեւ պայմանագրերի կնքման պայմանները ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի դեպքում.

ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի դեպքում Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ պայմանագրերի հաշվառման կարգը.

առեւտրային հարթակներին ներկայացվող պահանջները եւ դրանց աշխատանքի կանոնակարգը.

ձեւավորվում է ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի տեխնոլոգիական հիմքը, այդ թվում՝ առեւտրի էլեկտրոնային համակարգը, որն ապահովում է ժամկետային պայմանագրերով կենտրոնացված սակարկությունների անցկացումը.

թողունակության որոշման եւ բաշխման կանոններում նախատեսվում է թողունակությունը հաշվառելու եւ այն ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի մասնակիցների միջեւ բաշխելու մեխանիզմը.

տեղեկատվության փոխանակման կանոններում նախատեսվում է տեղեկատվության փոխանակման մեխանիզմը, որն ապահովում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը ժամկետային պայմանագրերով կենտրոնացված առեւտրի դեպքում:

3. Էլեկտրական էներգիայի «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի կազմակերպումը

«Մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտուր անցկացնելու համար՝

մշակվում են «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մոդելի նկատմամբ ընդհանուր մոտեցումներ.

մշակվում են «մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկություններն անցկացնելու մեխանիզմը եւ կարգը, ինչպես նաեւ էլեկտրական էներգիայի գնի որոշման կարգը.

սահմանվում է էլեկտրական էներգիայի երկկողմ եւ կենտրոնացված առեւտրի՝ ներառյալ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մասնակիցների կողմից թողունակության օգտագործման կարգը:

Նշված միջոցառումների կատարման արդյունքներով որոշվում է անդամ պետություններում գոյություն ունեցող՝ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի համար հարթակներն օգտագործելու հնարավորությունը կամ նոր հարթակ ստեղծելու նպատակահարմարությունը:

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման համապատասխան փուլում «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի տնտեսական նպատակահարմարության պայմանով՝

ձեւավորվում է «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մասնակիցների կազմը՝ սույն Ծրագրի I բաժնի 2-րդ ենթաբաժնին համապատասխան.

էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոններում նախատեսվում են՝

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների՝ «մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկություններին հասանելիության կարգը եւ ընթացակարգերը.

անդամ պետություններում «մեկ օր առաջ» սակարկությունների համակարգման ալգորիթմը.

համակարգված սակարկությունների անցկացման մեխանիզմը եւ կարգը, ինչպես նաեւ էլեկտրական էներգիայի գնի որոշման կարգը.

«մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի դեպքում Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ պայմանագրերի հաշվառման կարգը.

«մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի դեպքում ֆինանսական հաշվարկների անցկացման կարգը.

ձեւավորվում է «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի տեխնոլոգիական հիմքը, այդ թվում՝ առեւտրի էլեկտրոնային համակարգը, որն ապահովում է «մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկությունների անցկացումը.

թողունակության որոշման եւ բաշխման կանոններում նախատեսվում է թողունակությունը հաշվառելու եւ այն «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մասնակիցների միջեւ բաշխելու մեխանիզմը.

տեղեկատվության փոխանակման կանոններում նախատեսվում է տեղեկատվության փոխանակման մեխանիզմը, որն ապահովում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունը «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի դեպքում։

V. Պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների կարգավորման համակարգի ձեւավորումը

Պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների կարգավորման համակարգը ձեւավորվում է Հայեցակարգի V բաժնի չորրորդ եւ ութերորդ պարբերություններին համապատասխան՝ պլանային արժեքներից էլեկտրահաղորդման միջպետական գծերով (միջպետական հատվածքներով) էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների ֆիզիկական կարգավորման ապահովման նպատակով, եթե դա չի հակասում անդամ պետությունների օրենսդրությանը եւ այն անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների գործունեության կանոններին, որոնց էներգահամակարգերի միջեւ պետք է կարգավորվեն նշված շեղումները, եւ էլեկտրական էներգիայի սալդո–փոխհոսքերի այն ժամային շեղումների ֆինանսական կարգավորման կանոններին, որոնք առաջանում են էլեկտրական էներգիայի փոխադարձ մատակարարումների օրական գրաֆիկում ներառված փաստացի եւ պլանային մեծությունների միջեւ գործառնական օրվա ընթացքում:

Պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների կարգավորման համակարգի ձեւավորման եւ մատակարարումների փոխհամաձայնեցված պլանային ժամանակացույցերի պահպանման նպատակներով՝

լիազորվում են համակարգային օպերատորներ՝ որպես անդամ պետությունների էլեկտրաէներգետիկան համակարգերի միջեւ սալդո–փոխհոսքերի կամ անդամ պետությունների էներգահամակարգերի սալդո–փոխհոսքերի օրական ժամային գրաֆիկի ձեւավորման եւ կատարման համար (ներառյալ միջպետական հատվածքներում բաշխումը (անհրաժեշտության դեպքում)) պատասխանատու անձինք.

որոշվում են այն կազմակերպությունները, որոնք լիազորված են պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների ֆինանսական կարգավորման համար.

էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոններում նախատեսվում են՝

պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների որոշման կարգը.

պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի շեղումների ֆիզիկական կարգավորման մեխանիզմը.

պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների ֆինանսական կարգավորման մեխանիզմը.

պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների ֆինանսական կարգավորման դեպքում գնագոյացման մեխանիզմը, որը նախատեսում է Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի եւ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների մասնակիցների իրավահավասարության ապահովումը, պլանային արժեքներից փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների ֆինանսական կարգավորման դեպքում լիազորված կազմակերպությունների ծախսերի փոխհատուցումը եւ գնագոյացման թափանցիկությունը.

այն պայմանագրային հարաբերությունների ցանկը, որոնք անհրաժեշտ են պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների կարգավորման համար, ինչպես նաեւ անդամ պետությունների լիազորված կազմակերպությունների միջեւ պայմանագրերի մշակման եւ կնքման կարգը.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների միջեւ փոխգործակցության մեխանիզմները պլանային արժեքներից էլեկտրական էներգիայի փաստացի սալդո–փոխհոսքերի ժամային շեղումների կարգավորման դեպքում:

VI. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կարգավորումը

Հայեցակարգի VII բաժնին համապատասխան՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կարգավորումը ներառում է՝

էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումը՝ Միության իրավունքի հիման վրա եւ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

Պայմանագրի XVIII բաժնին համապատասխան իրականացվող հակամենաշնորհային կարգավորումը՝ հաշվի առնելով Պայմանագրի XIX եւ XX բաժիններով եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

1.Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումը

Էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումն իրականացվում է Պայմանագրի XIX բաժնին համապատասխան:

Անդամ պետությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հետ համատեղ մշակում են էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնները՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի շրջանակներում կիրառման համար:

2.Հակամենաշնորհային կարգավորում

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի հակամենաշնորհային կարգավորումն իրականացվում է Պայմանագրի XVIII բաժնին համապատասխան՝ հաշվի առնելով Պայմանագրի XIX եւ XX բաժիններով եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ համատեղ անցկացնում են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում մրցակցության ընդհանուր կանոնների կիրառման առանձնահատկությունների սահմանման նպատակահարմարության եւ անհրաժեշտության գնահատում՝ «Մրցակցության ընդհանուր սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 11-րդ կետին համապատասխան (Պայմանագրի 19-րդ հավելված)։

VII. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կառավարումը եւ դրա գործունեության ապահովումը

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կառավարման կազմակերպումը եւ դրա գործունեության ապահովումը իրականացվում են Հայեցակարգի VIII բաժնին համապատասխան։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան ձեւավորելու համար անդամ պետությունների կողմից ապահովվում է անդամ պետությունների՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում կարգավորման համար լիազորված պետական մարմինների, ենթակառուցվածքային կազմակերպությունների եւ անդամ պետությունների էլեկտրաէներգետիկական շուկաների մասնակիցների փոխգործակցությունը։

Փոխգործակցության նպատակը սույն Ծրագրի միջոցառումների համակարգված կատարումն է, այդ թվում՝ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի նախագծերի մշակումը։

VIII. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի համակարգը

Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ համատեղ մշակում են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտեր, որոնք ապահովում են Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորումը եւ գործունեությունը։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի համակարգը ներառում է՝

միջազգային պայմանագիր.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կանոնագիրքը, որն այդ թվում ներառում է՝

էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոնները.

թողունակության որոշման եւ բաշխման կանոնները.

միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մասին դրույթը.

տեղեկատվության փոխանակման կանոնները.

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող այլ ակտեր։

Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կանոնագրքի ընդունման կարգը սահմանվում է միջազգային պայմանագրով։

IX. Սույն Ծրագրի իրագործումը

1.Սույն Ծրագրի իրագործման մեխանիզմը

Անդամ պետությունների կողմից ընդունվում են սույն Ծրագրի միջոցառումների իրագործման պլաններ։

Սույն Ծրագրի իրագործման գծով անդամ պետությունների փոխգործակցության համակարգումը եւ սույն Ծրագրի կատարման դիտանցումն իրականացվում են Հանձնաժողովի կողմից։

Անդամ պետությունները Հանձնաժողովի հետ համատեղ ապահովում են սույն Ծրագրի միջոցառումների կատարումը։

2. Սույն Ծրագրի միջոցառումների ֆինանսավորումը

Սուն Ծրագրի միջոցառումների իրագործման ֆինանսական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից՝ իր լիազորություններին համապատասխան՝ Միության բյուջեի միջոցների հաշվին, անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից՝ անդամ պետությունների բյուջեների հաշվին՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան։ Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան ձեւավորելու միջոցառումների պլանի III բաժնով (սույն Ծրագրի հավելված) նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար կարող են ներգրավվել արտաբյուջետային աղբյուրներ։

3. Սույն Ծրագրի կատարման դիտանցումը

Սույն Ծրագրի կատարման դիտանցումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից։

Սույն Ծրագրի կատարումը դիտանցելու նպատակով անդամ պետությունների՝ էլեկտրաէներգետիկայի ոլորտում կարգավորման համար լիազորված պետական մարմինների կողմից առնվազն տարին 1 անգամ համատեղ քննարկվում է սույն Ծրագրի կատարման ընթացքը։

Հանձնաժողովի կոլեգիան առնվազն տարին 1 անգամ Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը ներկայացնում է զեկույց սույն Ծրագրի կատարման ընթացքի մասին

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական միության
էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի
ձեւավորման ծրագրի

ՊԼԱՆ

Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման միջոցառումների

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
I. Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի համակարգի ձեւավորումը				
1. Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման մասին միջազգային պայմանագրի (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, միջազգային պայմանագիր) նախագծի	1 հուլիսի 2018 թվականի			

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
մշակումը, որն այդ թվում պարունակում է էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնները՝ ներառյալ.				
միջազգային պայմանագրի նախագիծը		Միության անդամ պետություններ (այսուհետ՝ անդամ պետություններ), Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)	անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ), Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ)	միջազգային պայմանագրի նախագիծը

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնների նախագիծը		անդամ պետություններ, Հանձնաժողով	անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ), Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ)	Էլեկտրա-էներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնների նախագիծը
2. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կանոնագրքի մշակումը, այդ թվում՝	1 հուլիսի 2018 թվականի			

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայում էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոնների նախագծի		Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ)	Միության էլեկտրա-էներգետիկական ընդհանուր շուկայում էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կանոնների նախագիծ
միջպետական էլեկտրահաղորդման գծերի թողունակության որոշման եւ բաշխման կանոնների նախագծի		Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի	միջպետական էլեկտրահաղորդման գծերի թողունակության որոշման եւ բաշխման

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
			միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ)	կանոնների նախագիծ
միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մասին դրույթի նախագծի		Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության	միջպետական էլեկտրական ցանցերի զարգացման մասին դրույթի նախագիծ

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
			լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ)	
տեղեկատվության փոխանակման կանոնների նախագծի		Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ	տեղեկատվության փոխանակման կանոնների նախագիծ

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
3. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկան կարգավորող ակտերի ընդունումը, այդ թվում՝				
միջազգային պայմանագրի	1 հուլիսի 2019 թվականի	անդամ պետություններ, Հանձնաժողով		միջազգային պայմանագիր
էլեկտրաէներգետիկայի ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության միասնական կանոնների	1 հուլիսի 2019 թվականի	անդամ պետություններ, Հանձնաժողով		միջազգային պայմանագիր
էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի կանոնագրքի	միջազգային պայմանագրին համապատասխան	անդամ պետություններ, Հանձնաժողով		միջազգային պայմանագրին համապատասխան

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
II. «Մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկությունների միջոցով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կազմակերպման նախապատրաստումը				
1. «Մեկ օր առաջ» կենտրոնացված սակարկությունների միջոցով Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ էլեկտրական էներգիայի փոխադարձ առեւտրի կազմակերպման վերաբերյալ առաջարկների նախապատրաստումն այն մասով, որը վերաբերում է՝ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մոդելի նկատմամբ կիրառվող ընդհանուր մոտեցումներին «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի անցկացման եւ էլեկտրական էներգիայի գնի որոշման մեխանիզմին ու կարգին	մինչեւ 2017 թվականի ապրիլի 1-ը	Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ)	«մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտուր անցկացնելու առաջարկներ

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
երկկողմ եւ կենտրոնացված առեւտրի՝ ներառյալ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի մասնակիցների կողմից միջպետական էլեկտրահաղորդման գծերի թողունակության օգտագործման կարգի սահմանմանը				
անդամ պետություններում գոյություն ունեցող՝ «մեկ օր առաջ» կենտրոնացված առեւտրի համար հարթակներն օգտագործելու հնարավորության եւ նոր հարթակներ ստեղծելու անհրաժեշտության որոշմանը				

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
III. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի գործունեության տեխնոլոգիական հիմքի ձեւավորումը				
1. Միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների փոխգործակցությունն ապահովող՝ տեղեկատվության փոխանակման համակարգի ձեւավորումը	միջազգային պայմանագրին համապատասխան	Հանձնաժողով, անդամ պետություններ	Միության բյուջե (Հանձնաժողովի բյուջետային նախահաշվի միջոցներ), անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ) եւ (կամ) արտաբյուջետային աղբյուրներ	Միության էլեկտրա-էներգետիկական ընդհանուր շուկայի սուբյեկտների տեղեկատվության փոխանակման համակարգ

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
2. ժամկետային պայմանագրերով կենտրոնացված սակարկությունների անցկացումն ապահովող՝ առեւտրի էլեկտրոնային համակարգի մշակումը	միջազգային պայմանագրին համապատասխան	անդամ պետություններ	անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ) եւ (կամ) արտաբյուջետային աղբյուրներ	ժամկետային պայմանագրերով սակարկություններ անցկացնելու գծով առեւտրի էլեկտրոնային համակարգ

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
3. «Մեկ օր առաջ» համակարգված սակարկությունների անցկացումն ապահովող՝ առեւտրի էլեկտրոնային համակարգի մշակումը	միջազգային պայմանագրին համապատասխան	անդամ պետություններ	անդամ պետությունների բյուջեներ (պետական իշխանության լիազորված մարմինների գործունեության ապահովման միջոցներ) եւ (կամ) արտաբյուջետային աղբյուրներ,	«մեկ օր առաջ» համակարգված սակարկությունների անցկացման գծով առեւտրի էլեկտրոնային համակարգ

IV. Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագրի իրագործման ապահովումը

1. Անդամ պետություններում Ծրագրի իրագործման պլանների ընդունումը	Ծրագրի հաստատման օրվանից 3 ամսվա ընթացքում	անդամ պետություններ	անդամ պետության ակտը	

Միջոցառման անվանումը	Իրագործման ժամկետը	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը	Արդյունքը
2. Ծրագրի կատարման դիտանցումը	առնվազն տարին 1 անգամ	Հանձնաժողով, անդամ պետություններ		զեկույցի ներկայացում Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը